ԵՍ ԵՄ ՃՇՄԱՐԻՏ ՈՐԹԱՏՈՒՆԿԸ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ՀՈՎՀԱՆՆԵՍ 15.1-11

1 Ես եմ ճշմարիտ որթատունկը, և իմ Հայրը մշակն է: 2 Յուրաքանչյուր ճյուղ, որ ինձ վրա է և պտուղ չի
տալիս, նա կտրում է այն. և յուրաքանչյուր պտղաբեր ճյուղ էտում է, որ առավել պտղաբեր լինի: 3 Դուք
արդեն մաքրվել եք այն խոսքի միջոցով, որ ձեզ ասացի: 4 Մնացեք իմ մեջ, ես էլ՝ ձեր մեջ: 5 Ինչպես
ճյուղն ինքն իրենից չի կարող պտղաբերել, եթե որթատունկի հետ միավորված չլինի, այնպես էլ դուք,
եթե ինձ հետ չմիավորվեք: Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը. ով ինձ հետ է միավորվում, իսկ ես՝
նրա հետ, նա շատ պտուղ է տալիս, որովհետև առանց ինձ ոչինչ չեք կարող անել: 6 Եթե մեկն ինձ
հետ չի միավորվում, նրան ճյուղի պես կնետեն, և կչորանա: Ապա այն կհավաքեն, կրակը կգցեն, և
կայրվի: 7 Եթե ինձ հետ միավորված մնաք, իմ խոսքերն էլ ձեր մեջ մնան, ինչ որ կամենաք, խնդրեք,
այն ձեզ կտրվի: 8 Իմ Հայրն այն դեպքում կփառավորվի, երբ դուք շատ պտուղ տաք և իմ
աշակերտները լինեք: 9 Ինչպես Հայրն ինձ սիրեց, այնպես էլ ես ձեզ սիրեցի. մնացեք իմ սիրո մեջ: 10
Եթե իմ պատվիրանները պահեք, կմնաք իմ սիրո մեջ, ինչպես ես իմ Հոր պատվիրանները պահեցի և
նրա սիրո մեջ եմ մնում: 11 Այս բաները ձեզ ասացի, որպեսզի իմ ուրախությունը ձեր մեջ լինի, և ձեր
ուրախությունը կատարյալ լինի:

1. *Ես եմ կեանքի հացը – Հով. 6.35*
2. *Ես եմ աշխարհի լոյսը - Հով. 6.35*
3. *եմ ոչխարների դուռը – Հով. 6.35*
4. *Ես եմ բարի հովիվը – Հով. 6.35*
5. *Ես եմ հարությունը եւ կեանքը – Հով. 6.35*
6. *Ես եմ ճանապարհը եւ ճշմարտությունը եւ կեանքը. – Հով. 14.6*
7. *Ես եմ ճշմարիտ որթատունկը – Հով.15.1*

I. ՀԻՍՈՒՍԻ ՄԵՋ ՄՆԱԼԸ ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ Է ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ:

1 Ես եմ ճշմարիտ որթատունկը, և իմ Հայրը մշակն է:

Ծննդոց 1.28 – Աստված օրհնեց նրանց և Աստված ասաց նրանց. Աճեցեք, (be fruitful) բազմացեք և լցրեք երկիրն ու տիրեցեք դրան. իշխեք ծովի ձկների, երկնքի թռչունների վրա ու երկրի վրա սողացող բոլոր կենդանիների վրա:

- ***ՈՐԹԱՏՈՒՆԿԸ Իսրայելի հոգևոր արտոնությունների խորհրդանիշն է: Իսկ մեզ համար կյանքի աղբյուրն ու սնունդը: Թեև ակնհայտ է, որ պտղաբեր ճյուղերը ներկայացնում են ճշմարիտ քրիստոնյաներին:***

  Սաղմոս 80.8-9 – Մի որթատունկ փոխադրեցիր Եգիպտոսից, ազգեր դուրս հանեցիր և տնկեցիր այն: Ճանապարհ պատրաստեցիր նրա առջև և հաստատեցիր նրա արմատները, և նա լցրեց երկիրը: Սարերը ծածկվեցին նրա ստվերով, և Աստծու մայրիների պես են նրա ճյուղերը: Նրա ոստերը երկարացրիր մինչև ծովը և նրա ճյուղերը՝ մինչև գետը:

  Երեմիա 2.21 – Ես քեզ տնկել էի (իմ Հայրը մշակն է) իբրև ընտիր որթատունկ, ամբողջովին ազնիվ սերմ, բայց դու ինձ համար ինչպե՞ս փոխակերպվեցիր այլասերված օտար տունկի:

- *Աստվածաշունչը հաճախ օգտագործում է պտուղի փոխաբերությունը՝ նկարագրելու մեր կյանքի արդյունքը: Պտուղը կարող է լինել ինչպես լավ, այնպես էլ վատ.*

  Հռ.7.5 Որովհետև քանի դեռ մարմնի մեջ էինք, մեղսավոր կրքերը, որ օրենքի պատճառով էին, զորանում էին մեր անդամների մեջ, որպեսզի մենք պտղաբեր լինենք մահվան համար:

- *Եթե Աստված սիրում է քեզ, Նա էտելու է քեզ:*

II. ՀԻՍՈՒՍԻ ՄԵՋ ՄՆԱԼԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԷՏՈՒՄ:

2 Յուրաքանչյուր ճյուղ, որ ինձ վրա է և պտուղ չի տալիս, նա կտրում է այն. և յուրաքանչյուր պտղաբեր ճյուղ էտում է, որ առավել պտղաբեր լինի: 3 Դուք արդեն մաքրվել եք այն խոսքի միջոցով, որ ձեզ ասացի:

- *Աստծո խոսքը մաքրող միջոց է: Այն դատապարտում է մեղքը, ներշնչում է սրբություն, նպաստում է աճին և բացահայտում է հաղթանակի զորությունը: Հիսուսը շարունակում է իր ժողովրդին լվանալ խոսքի միջոցով (Եփեսացիս 5.26):*

- *Պտղաբեր քրիստոնյան շատ ավելի լավ արդյունք կտա:*

  Առակ. 11.30 - Արդարի պտուղը կեանքի ծառ է.

Այսպիսով, ինչպե՞ս եք դառնում պտղաբեր:

4 Մնացե՛ք իմ մեջ, ես էլ՝ ձեր մեջ: 5 Ինչպես ճյուղն ինքն իրենից չի կարող պտղաբերել, եթե որթատունկի հետ միավորված չլինի, այնպես էլ դուք, եթե ինձ հետ չմիավորվեք:

> *Երբ մեր Տերն ասում է՝ մնա իմ մեջ, նա խոսում է կամքի, ընտրությունների, մեր կայացրած որոշումների մասին: Մենք պետք է որոշենք անել այնպիսի բաներ, որոնք մեզ կապում են նրա հետ: Ահա թե ինչ է նշանակում մնալ նրա մեջ: (Բոյս)*

Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը. *ով ինձ հետ է միավորվում, իսկ ես՝ նրա հետ, նա շատ պտուղ է տալիս, որովհետև առանց ինձ ոչինչ չեք կարող անել:*

- *Պողոսն արտահայտում է նույն ճշմարտությունը, երբ ասում է.*

  «Այո՛, Քրիստոսի հետ մեռա խաչի վրա և այժմ կենդանի եմ. ես չե՞ որ ապրում եմ՛, այլ Քրիստո՛ն է ապրում իմ մեջ» (Գաղատացիս 2.20), և ես «ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով (Փիլիպպեցիս 4.13):»

> *Ամեն բան ասելով՝ Պողոս առաքյալը ոչ միայն ակնարկում է հոգևոր պարգևները, այլ նաև Հոգու պտուղը, որը շնորհների որակավորման գործոնն է:*

III. ՀԻՍՈՒՍԻ ՄԵՋ ՄՆԱԼԸ ԼԱՎ ՊՏՈՒՂ ԿԲԵՐԻ:

6 Եթե մեկն ինձ հետ չի միավորվում, նրան ճյուղի պես կնետեն, և կչորանա: Ապա այն կհավաքեն, կրակը կգցեն, և կայրվի: 7 Եթե ինձ հետ միավորված մնաք, իմ խոսքերն էլ ձեր մեջ մնան, ինչ որ կամենաք, խնդրեք, այն ձեզ կտրվի: 8 Իմ Հայրն այն դեպքում կփառավորվի, երբ դուք շատ պտուղ տաք և իմ աշակերտները լինեք:

- ***Քրիստոսի ճշմարիտ հետևորդները ճանաչելի կլինեն իրենց պտուղներից:***

Մատ. 7.15-23 - 15 Զգոյշ կացէք սուտ մարգարէներիցը, որ գալիս են ձեզ մօտ ոչխարների հանդերձներով, բայց ներսեւանց յափշտակող գայլեր են: 16 Իրանց պտուղներից նորանց ճանաչեցէք. միթէ փշերից խաղող են քաղում, կամ տատասկից՝ թուզ: 17 Այսպէս ամեն բարի ծառ բարի պտուղ է բերում, եւ չար ծառը չար պտուղ է բերում: 18 Չէ կարող բարի ծառը չար պտուղ բերել, ոչ էլ չար ծառը բարի պտուղ բերել: 19 Ամեն ծառ որ բարի պտուղ չէ բերում, կտրվում է եւ կրակի մէջ գցվում: 20 Ուրեմն իրանց պտուղներիցը ճանաչեցէք նորանց:

21 Ոչ թէ ամեն ինձ Տէր, Տէր ասողը կմտնէ երկնքի արքայութիւնը. այլ նա որ կատարում է իմ Հօր կամքը, որ երկնքումն է: 22 Շատերը կասեն ինձ այն օրը, Տէր, Տէր, չէ՞ որ քո անունովը մարգարէացանք, եւ քո անունովը դեւեր հանեցինք, եւ քո անունովը շատ զօրութիւններ գործեցինք: 23 Եւ ես այն ժամանակ պարզ կասեմ նորանց, թէ՝ Երբէք ձեզ չեմ ճանաչել. ինձանից դէն գնացէք, ով անօրէնութիւն գործողներ:

Երգ Երգոց 2.15 – Մեզ համար բռնեցեք աղվեսներին, այգիներն ավերող փոքրիկ աղվեսներին, որովհետև մեր այգիները ծաղկել են:

“ Մեր ամենամեծ խնդիրը ոչ թե մեզնից դուրս է, այլ մեր սրտում է:

*9 Ինչպես Հայրն ինձ սիրեց, այնպես էլ ես ձեզ սիրեցի. **մնացեք իմ սիրո մեջ**: 10 Եթե իմ պատվիրանները պահեք, կմնաք իմ սիրո մեջ, ինչպես ես իմ Հոր պատվիրանները պահեցի և նրա սիրո մեջ եմ մնում: 11 Այս բաները ձեզ ասացի, որպեսզի իմ ուրախությունը ձեր մեջ լինի, և ձեր ուրախությունը կատարյալ լինի:*

16 Դուք չէք, որ ինձ ընտրեցիք, այլ ես ձեզ ընտրեցի ու ձեզ կարգեցի, որպեսզի դուք գնաք և պտղաբերեք, ու ձեր պտուղը մնա. որպեսզի ինչ որ իմ անունով խնդրեք Հորից, տա ձեզ: 17 Այս եմ ձեզ պատվիրում, որ սիրեք միմյանց:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ